ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/37

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Չարենցավան համայնքի «Լուսաբաց մանկապարտեզ» ՀՈԱԿ
Բողոք բերող՝ «Էլմիրա Ավագյան Սուրենի» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Էլմիրա Ավագյան Սուրենի» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Ա. Հովհաննիսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՉՀ-ԼՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցում, սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էլմիրա Ավագյան Սուրենի» Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 05.03.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել Չարենցավան համայնքի «Լուսաբաց մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՉՀ-ԼՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չեղարկել և նոր ընթացակարգ հայտարարել, որտեղ ապահոված կլինեն հավասար պայմաններ հնարավոր բոլոր մասնակիցների համար:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 05.03.2020թ.-ին:

06.03.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/37 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

16.03.2020թ.-ին և 03.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 16.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.04.2020թ.-ին:

2. **<u>«Էլմիրա Ավագյան Սուրենի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Էլմիրա Ավագյան Սուրենի» Ա/Ձ-ն 05.03.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի <<Լուսաբաց>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ը /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՉՀ-ԼՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/: Հրավերով մատակարարման պայմաններ վերնագրի տակ նշված է, որ մատակարարումները գնորդի պահանջով պետք է իրականացվեն յուրաքանչյուր աշխատանքային օր՝ օրը 2 անգամ, ընդ որում մատակարարումներն իրականացվում են հետևյալ հաջորդականությամբ՝ մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 9:30 և 13:30: Ընդ որում, պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է յուրաքանչյուր մատակարարումից առնվազն 1 ժամ առաջ (համապատասխանաբար ժամը 08:30-ին և 12:30-ին):

Գտնում եմ, որ մատակարարման սույն պայմանով խախտվել է ՀՀ գնումների մասին օրենքի 3-րդ, 7-րդ և 13-րդ հոդվածները այն իմաստով, որ խտրական վերաբերմունք, ոչ մրցակցային և անհավասար պայմաններ են ստեղծվում ընթացակարգի մասնակիցների համար այն իմաստով, որ մատակարարումից մեկ ժամ առաջ պատվիրատուի կողմից պատվեր ստանալով մասկանիցը ոչ մի կերպ չի հասցնի մատակարարել պատվերը պատշաճ և ժամանակին: Մասնավորապես հաց արտադրող ընկերությունը, եթե հացի պատվերը ստանա մատակարարումից մեկ ժամ առաջ, ապա նա չի կարող արտադրել այդ հացը և ճիշտ ժամանակին հասցնել պատվիրատուին, կամ եթե մատակարարը գտնվում է Արմավիրի կամ Արարատի մազրերում, նա մեկ ժամ առաջ պատվերը ստանալուց հետո չի հասցնի մատակարարել այդ ամենը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:»:

Ելնելով վերոգրյալից, «Էլմիրա Ավագյան Սուրենի» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել Չարենցավան համայնքի «Լուսաբաց մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՉՀ-ԼՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չեղարկել և նոր ընթացակարգ հայտարարել, որտեղ ապահոված կլինեն հավասար պայմաններ հնարավոր բոլոր մասնակիցների համար:

3. <u>«Լուսաբաց մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 09.03.2020թ.-ին դիմել է «Լուսաբաց մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էլմիրա Ավագյան Սուրենի» Ա/Ձ-ի կողմից 05.03.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նաև գրավոր դիրքորոշում:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Չարենցավան համայնքի «Լուսաբաց մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 28.02.2020թ.-ին հայտարարվել է «ՉՀ-ԼՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որը խնբավորվել է 77 չափաբաժնի:

Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանված եղել մինչև 06.03.2020թ.-ի ժամը 11:00-ն:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը՝

Մատակարարման պայմանները.

- Մատակարարումները Գնորդի պահանջով պետք է իրականացվեն յուրաքանչյուր աշխատանքային օր՝ օրը 2 անգամ: Ընդ որում, մատակարարումներն իրականացվում են հետևյալ հաջորդականությամբ՝ մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 09:30-ն և 13:30-ն:

- Ընտրված ճանաչված և պայմանագիր կնքած Մասնակիցը ապրանքը(ները) մատակարարում է Գնորդի կողմից ներկայացված պահանջագրի հիման վրա, որտեղ Գնորդի կողմից պետք է հստակ նշված լինի ձեռք բերվող ապրանքի(ների) տեխնիկական բնութագիրը, չափման միավորը, քանակը, միավորի և ընդհանուր գները: Ընդ որում, պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է յուրաքանչյուր մատակարարումից առնվազն 1 ժամ առաջ (համապատասխանաբար ժամը 08:30-ին և 12:30-ին): Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Էլմիրա Ավագյան

Սուրենի» Ա/Ձ-ի կողմից 05.03.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու

հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա

ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Չարենցավան համայնքի «Լուսաբաց մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով 28.02.2020թ.-ին հայտարարված «ՉՀ-ԼՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկայի բնութագրով սահմանված՝ պահանջագիրը Վաճառողին յուրաքանչյուր մատակարարումից առնվազն 1 ժամ առաջ տրամադրելու պայմանը, չի ապահում մրցակցության հավասար պայմաններ՝ հնարավոր մասնակիցների համար, որի արդյունքում գնումների գործընթացում առաջացվել է մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ: Նման բնութագրերն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք չեն այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Ընդ որում՝ Պատվիրատուի կողմից բողոքի քննության ընթացքում չներկայացվեց վերաբերելի ապացույց, առ այն, որ պահանջագիրը Վաճառողին յուրաքանչյուր մատակարարումից առնվազն 1 ժամ առաջ տրամադրելու պայմանի սահմանումն ելնում է վերջինիս կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթներից և որ սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը, ինչպես նաև բնութագրերն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էլմիրա Ավագյան Սուրենի» Ա/Ձ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են, իսկ Ընթացակարգի տեխնիկական

բնութագով սահմանված պահանջները անհիմն են և սահմանափակում են հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 3-րդ, 7-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում Ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Էլմիրա Ավագյան Սուրենի» Ա/Ձ-ի կողմից 05.03.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/37 ծածկագրով բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՁՀ-ԼՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**